ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-354-12.11.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Տիեզերական գործունեության մասին օրենքի նպատակը

1. Օրենքի նպատակն է տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության տնտեսության, գիտության, տեխնոլոգիայի զարգացումը, անվտանգության ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության ընդլայնումը:

Հոդված 2. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տիեզերական գործունեության կազմակերպման եւ իրականացման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 3. Տիեզերական գործունեության բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Տիեզերական գործունեության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն Օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները՝

1) Տիեզերական գործունեություն՝ տիեզերական օբյեկտների եւ/կամ տեխնիկայի արտադրություն, վերանորոգում, արդիականացում, օտարում, տիեզերական տեխնիկայի օգտագործմամբ հետազոտությունների եւ/կամ փորձարկումների իրականացում, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների ընդունում եւ մշակում, տիեզերական օբյեկտների արձակում, վայրէջքի եւ թռիչքի ընթացքում դրանց նկատմամբ կառավարում, տիեզերական ենթակառուցվածքների ստեղծումը եւ շահագործումը:

2) Տիեզերական օբյեկտ՝ Տիեզերական տարածությունում գտնվող կամ տիեզերական տարածություն արձակվող ցանկացած սարքավորում եւ դրա բաղկացուցիչ մասեր:

3) Տիեզերական տեխնիկա՝ տիեզերական օբյեկտներին տիեզերական տարածություն արձակող սարքավորումներ եւ դրա բաղկացուցիչ մասեր, տիեզերական տարածությունում տիեզերական օբյեկտների կառավարման համար նախատեսված սարքավորումներ եւ դրա բաղկացուցիչ մասեր:

4) Շահագործող՝ տիեզերական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ:

5) Տիեզերական ենթակառուցվածք՝ փոխկապակցված կառույցներ, շինություններ եւ/կամ օբյեկտներ, որոնք օգտագործվում են բացառապես տիեզերական գործունեության ապահովման նպատակով:

6) Երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալներ՝ տիեզերական տարածությունում գտնվող տիեզերական օբյեկտից ստացված օդերևութաբանական, հեռակա զննման, քարտեզագրման, գյուղատնտեսական տվյալներ: Երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալները չեն ներառում կապի, հեռահաղորդակցային եւ ռադիոնավիգացիոն տվյալներ:

7) Տիեզերական տարածություն՝ Ծովի մակարդակից 100 կիլոմետրից բարձր գտնվող տարածություն:

Հոդված 5. Տիեզերական գործունեության սկզբունքները

1. Տիեզերական գործունեության իրականացման սկզբունքներ են՝

1)տիեզերական գիտության ձեռքբերումների եւ տեխնիկայի օգտագործման միջոցով միջազգային անվտանգության եւ խաղաղության պահպանման աջակցում,

2)տիեզերական գործունեության անվտանգության եւ շրջակա միջավայրի պահպանման ապահովում,

3)տիեզերական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության համար հավասար եւ փոխշահավետ համագործակցության ապահովում,

4)տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պատասխանատվության ապահովում,

5)գիտական, սոցիալ-տնտեսական նպատակներով կիրառվող տիեզերական տեխնիկայի ռացիոնալ համադրության եւ հավասարակշռված զարգացման ապահովում,

ԳԼՈՒԽ 2. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1. Տիեզերական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններ են:

1) հաստատում է տիեզերական գործունեության բնագավառի զարգացման եւ ֆինանսավորման ծրագրեր.

2) հաստատում է տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման կարգերը.

3) սահմանում է տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների գրանցման կարգը.

4) սահմանում է տիեզերական գործունեության լիցենզավորման կարգը եւ պայմանները.

5) սահմանում է շահագործումից հանված պետական սեփականություն հանդիսացող տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների օգտագործման կարգը.

6) սահմանում է տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարների՝ ներառյալ վթարները եւ աղետների քննության կարգը

7) սահմանում է տիեզերական օբյեկտները եւ/կամ տեխնիկան շահագործողի կողմից այլ շահագործողի օտարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը:

Հոդված 7. Տիեզերական գործունեության հարցերով լիազոր մարմինը

1. Տիեզերական գործունեության պետական կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

1) Լիազոր մարմինը տիեզերական գործունեության բնագավառում՝

ա. մշակում եւ իրականացնում է պետական քաղաքականությունը,

բ. իրականացնում է տիեզերական ոլորտի գործունեության լիցենզավորումը

գ. տիեզերական օբյեկտները եւ տեխնիկան շահագործողի կողմից այլ շահագործողի օտարման դեպքում տալիս է համաձայնություն

դ. ապահովում է՝ շահագրգիռ մարմինների եւ կազմակերպությունների համագործակցությունը,

ե. ապահովում է՝ գիտական եւ սոցիալ-տնտեսական նշանակության տիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները, ինչպես նաեւ շահագրգիռ մարմինների հետ համատեղ տիեզերական ծրագրերի, տիեզերական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող այլ մարմինների կողմից տիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները,

զ. ապահովում է՝ միջազգային համագործակցության իրականացումը,

է. ապահովում է՝ շրջակա միջավայրի վրա տիեզերական գործունեության վնասակար ներգործության նվազեցման աշխատանքների եւ միջոցառումների իրականացում,

2) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8. Տիեզերական գործունեության լիցենզավորումը

1. Տիեզերական գործունեությունը իրականացվում է լիցենզիայի հիման վրա:

ԳԼՈՒԽ 3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 9. Տիեզերական գործունեության ֆինանսավորումը

1.Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող տիեզերական գործունեության ֆինանսավորումն իրականցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաեւ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ 4. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հոդված 10. Տիեզերական օբյեկտներ եւ տեխնիկա

1.Տիեզերական օբյեկտները եւ տեխնիկան ենթակա են պարտադիր գրանցման եւ պետք է պարունակեն Հայաստանի Հանրապետությանը վերջիններիս պատկանելիությունն հաստատող նշումը:

2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված տիեզերական օբյեկտների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է վերահսկողություն՝ Երկրի վրա այդ օբյեկտների գտնվելու ընթացքում, դեպի տիեզերք թռիչքի ցանկացած փուլում կամ տիեզերքում գտնվելու ընթացքում, երկնային մարմինների վրա դրանց գտնվելու ընթացքում, ինչպես նաեւ դեպի Երկիր վերադառնալու ընթացքում եւ դրանից հետո:

Հոդված 11. Տիեզերական ենթակառուցվածքներ

1. Հայաստանի Հանրապետության տիեզերական ենթակառուցվածքներն են՝

1)Տիեզերանավակայաններ,

2)Մեկնարկային համալիրներ եւ արձակման կայաններ,

3)Կառավարման եւ չափումների համալիրներ,

4)Տիեզերական օբյեկտների թռիչքների կառավարման կենտրոններ եւ կետեր,

5)Տեղեկատվության ընդունման, պահպանման եւ մշակման կետեր,

6)Տիեզերական տեխնիկայի պահպանման բազաներ,

7)Տիեզերական օբյեկտների մասնատվող թափոնների անկման վայրեր,

8)Տիեզերական օբյեկտների վայրէջքի համար նախատեսված տարածքներ (պոլիգոններ) եւ թռիչքային-վայրէջքային գծեր,

9)Տիեզերական տեխնիկայի մշակման համար փորձարարական բազայի օբյեկտներ,

10)Տիեզերագնացների նախապատրաստման համար կենտրոններ եւ սարքավորումներ,

11)Տիեզերական գործունեության իրականացման համար օգտագործվող այլ կառուցվածքներ եւ տեխնիկա:

ԳԼՈՒԽ 5. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հոդված 12. Տիեզերական գործունեության անվտանգության ապահովումը

1.Տիեզերական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված անվտանգության պահանջների պահպանմամբ:

2.Տիեզերական գործունեությունը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող օրենսդրությանը համապատասխան:

3. Տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների շահագործողները տիեզերական գործունեության իրականացման ընթացքում ի հայտ եկած վտանգների մասին տեղեկատվությունը անհապաղ պետք է ներկայացնեն լիազոր, ինչպես նաեւ անվտանգության, պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների բնագավառների լիազոր մարմիններին:

4. Բնակչությանը եւ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի առաջացման դեպքում լիազոր մարմինը, շահագործողներն անհապաղ տեղեկացնում են այդ մասին պետական կառավարման համակարգի համապատասխան մարմիններին:

Հոդված 13. Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարների քննությունը

1.Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարները՝ ներառյալ վթարները եւ աղետները, ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 14. Որոնման եւ փրկարարական աշխատանքները, պատահարների հետեւանքների վերացումը

1.Հայաստանի Հանրապետության տարածքում տիեզերական գործունեության իրականացման ընթացքում որոնման եւ փրկարարական աշխատանքները, ինչպես նաեւ պատահարների հետեւանքների վերացումը կատարվում են ՀՀ

օրենսդրությամբ նման լիազորություն ունեցող շահագրգիռ մարմինների լիազոր մարմնի կողմից:

2.Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում պատահարների հետեւանքների վերացման աշխատանքները ներառում են պատահարների արդյունքում տուժած արդյունաբերական եւ այլ օբյեկտների վերականգնումն ու վերակառուցումը, անհրաժեշտ բնապահպանական միջոցառումները, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կրած վնասի հատուցումը:

3.Օտարերկրյա պետության տարածքում տիեզերական գործունեության իրականացման ընթացքում որոնման եւ փրկարարական աշխատանքները, ինչպես նաեւ պատահարների հետեւանքների վերացումը կատարվում են փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Հոդված 15. Տիեզերական գործունեության ապահովագրությունը

1.Շահագործողները, որոնք օգտագործում են (շահագործում են) տիեզերական տեխնիկա կամ որոնց պատվերով ստեղծվում եւ օգտագործվում է (շահագործվում է) տիեզերական տեխնիկան պարտավոր են ապահովագրել տիեզերագնացների, տիեզերական ենթակառուցվածքների, տիեզերական օբյեկտների աշխատակիցների կյանքի, առողջությանը կամ այլ անձանց կյանքին, առողջությանը ու գույքին պատճառած վնասի համար պատասխանատվության ռիսկը:

Հոդված 16. Տիզերեկան օբյեկտների եւ տիեզերական տեխնիկայի օտարումը

1.Տիեզերական օբյեկտների եւ/կամ տեխնիկայի օտարումը շահագործողի կողմից այլ շահագործողի ենթակա է լիազոր մարմնի կողմից համաձայնեցման:

ԳԼՈՒԽ 6. ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված 17. Վնասների հատուցում

1.Շահագործողները փոխհատուցում են տիեզերական օբյեկտների կողմից երկրի վրա գտվող գույքին պատճառած ցանկացած վնաս:

2.Տիեզերական գործունեության արդյունքում հասցված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 18. Պետական վերահսկողությունը տիեզերական գործունեության բնագավառում

1. Տիեզերական գործունեության բնագավառում պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 19. Սույն օրենքի գործողության մեջ մտնելը

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգերը կառավարության հաստատմանն են ներկայացվում սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

~~ՆԱԽԱԳԻԾ~~
Երկրորդ ընթերցում
Կ-354-12.11.2019-ՏՀ-011/0

Formatte

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Տիեզերական գործունեության մասին օրենքի նպատակը

1. Օրենքի նպատակն է տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության տնտեսության, գիտության, տեխնոլոգիայի զարգացումը, անվտանգության ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության ընդլայնումը:

Հոդված 2. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տիեզերական գործունեության կազմակերպման եւ իրականացման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 3. Տիեզերական գործունեության բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Տիեզերական գործունեության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն Օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները՝

1) Տիեզերական գործունեություն՝ տիեզերական օբյեկտների եւ/կամ տեխնիկայի արտադրություն, վերանորոգում, արդիականացում, օտարում, տիեզերական տեխնիկայի օգտագործմամբ հետազոտությունների եւ/կամ փորձարկումների իրականացում, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների ընդունում եւ մշակում, տիեզերական օբյեկտների արձակում, վայրէջքի եւ թռիչքի ընթացքում դրանց նկատմամբ կառավարում, տիեզերական ենթակառուցվածքների ստեղծումը եւ շահագործումը:

2) Տիեզերական օբյեկտ՝ Տիեզերական տարածությունում գտնվող կամ տիեզերական տարածություն արձակվող ցանկացած սարքավորում եւ դրա բաղկացուցիչ մասեր:

3) Տիեզերական տեխնիկա՝ տիեզերական օբյեկտներին տիեզերական տարածություն արձակող սարքավորումներ եւ դրա բաղկացուցիչ մասեր, տիեզերական տարածությունում տիեզերական օբյեկտների կառավարման համար նախատեսված սարքավորումներ եւ դրա բաղկացուցիչ մասեր:

4) Շահագործող՝ տիեզերական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ:

5) Տիեզերական ենթակառուցվածք՝ փոխկապակցված կառույցներ, շինություններ եւ/կամ օբյեկտներ, որոնք օգտագործվում են բացառապես տիեզերական գործունեության ապահովման նպատակով:

6) Երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալներ՝ տիեզերական տարածությունում գտնվող տիեզերական օբյեկտից~~, որից~~ ստացված~~ում են օդերեւութաբանական~~օդերևութաբանական, հեռակա զննման, քարտեզագրման, գյուղատնտեսական տվյալներ: Երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալները չեն ներառում կապի, հեռահաղորդակցային եւ ռադիոնավիգացիոն տվյալներ:

7) Տիեզերական տարածություն՝ Ծովի մակարդակից 100 կիլոմետրից բարձր գտնվող տարածություն:

Հոդված 5. Տիեզերական գործունեության սկզբունքները

1. Տիեզերական գործունեության իրականացման սկզբունքներ են՝

1)տիեզերական գիտության ձեռքբերումների եւ տեխնիկայի օգտագործման միջոցով միջազգային անվտանգության եւ խաղաղության պահպանման աջակցում,

2)տիեզերական գործունեության անվտանգության եւ շրջակա միջավայրի պահպանման ապահովում,

3)տիեզերական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության համար հավասար եւ փոխշահավետ համագործակցության ապահովում,

4)տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պատասխանատվության ապահովում,

5)գիտական, սոցիալ-տնտեսական նպատակներով կիրառվող տիեզերական տեխնիկայի ռացիոնալ համադրության եւ հավասարակշռված զարգացման ապահովում,

ԳԼՈՒԽ ~~II~~2. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1. Տիեզերական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններ են:

1)հաստատում է տիեզերական գործունեության բնագավառի զարգացման եւ ֆինանսավորման ծրագրեր.

2)հաստատում է տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման կարգերը.

3)սահմանում է տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների գրանցման կարգը.

4)սահմանում է տիեզերական գործունեության լիցենզավորման կարգը եւ պայմանները.

5)սահմանում է շահագործումից հանված պետական սեփականություն հանդիսացող տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների օգտագործման կարգը.

6)սահմանում է տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարների՝ ներառյալ վթարները եւ աղետների քննության կարգը

7)սահմանում է տիեզերական օբյեկտները եւ/կամ տեխնիկան շահագործողի կողմից այլ շահագործողի օտարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը:

Հոդված 7. Տիեզերական գործունեության հարցերով լիազոր մարմինը

1. Տիեզերական գործունեության պետական կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

1)Լիազոր մարմինը տիեզերական գործունեության բնագավառում՝

ա.մշակում եւ իրականացնում է պետական քաղաքականությունը,

բ.իրականացնում է տիեզերական ոլորտի գործունեության լիցենզավորումը

գ.տիեզերական օբյեկտները եւ տեխնիկան շահագործողի կողմից այլ շահագործողի օտարման դեպքում տալիս է համաձայնություն~~եցում~~

~~4) իր իրավասության սահմաններում~~դ. ապահովում է՝

~~ա)~~ շահագրգիռ մարմինների եւ կազմակերպությունների համագործակցությունը,

~~բ)~~ե. ապահովում է՝ գիտական եւ սոցիալ-տնտեսական նշանակության տիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները, ինչպես նաեւ շահագրգիռ մարմինների հետ համատեղ տիեզերական ծրագրերի, տիեզերական գործունեության

բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող այլ մարմինների կողմից տիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները,

~~գ)~~գ. ապահովում է՝ միջազգային համագործակցության իրականացումը,

~~դ)~~է. ապահովում է՝ շրջակա միջավայրի վրա տիեզերական գործունեության վնասակար ներգործության նվազեցման աշխատանքների եւ միջոցառումների իրականացում,

~~5~~2) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8. Տիեզերական գործունեության լիցենզավորումը

1. Տիեզերական գործունեությունը իրականացվում է լիցենզիայի հիման վրա:

ԳԼՈՒԽ ~~III~~3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 9. Տիեզերական գործունեության ֆինանսավորումը

1.Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող տիեզերական գործունեության ֆինանսավորումն իրականցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաեւ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ ~~IV~~4. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հոդված 10. Տիեզերական օբյեկտներ եւ տեխնիկա

1.Տիեզերական օբյեկտները եւ տեխնիկան ենթակա են պարտադիր գրանցման եւ պետք է պարունակեն Հայաստանի Հանրապետությանը վերջիններիս պատկանելիությունն հաստատող նշումը:

2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված տիեզերական օբյեկտների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է վերահսկողություն՝ Երկրի վրա այդ օբյեկտների գտնվելու ընթացքում, դեպի տիեզերք թռիչքի ցանկացած փուլում կամ տիեզերքում գտնվելու ընթացքում, երկնային մարմինների վրա դրանց գտնվելու ընթացքում, ինչպես նաեւ դեպի Երկիր վերադառնալու ընթացքում եւ դրանից հետո:

Հոդված 11. Տիեզերական ենթակառուցվածքներ

1. Հայաստանի Հանրապետության տիեզերական ենթակառուցվածքներն են՝

1)Տիեզերանավակայաններ,

2)Մեկնարկային համալիրներ եւ արձակման կայաններ,

3)Կառավարման եւ չափումների համալիրներ,

4)Տիեզերական օբյեկտների թռիչքների կառավարման կենտրոններ եւ կետեր,

5)Տեղեկատվության ընդունման, պահպանման եւ մշակման կետեր,

6)Տիեզերական տեխնիկայի պահպանման բազաներ,

7)Տիեզերական օբյեկտների մասնատվող թափոնների անկման վայրեր,

8)Տիեզերական օբյեկտների վայրէջքի համար նախատեսված տարածքներ (պոլիգոններ) եւ թռիչքային-վայրէջքային գծեր,

9)Տիեզերական տեխնիկայի մշակման համար փորձարարական բազայի օբյեկտներ,

10)Տիեզերագնացների նախապատրաստման համար կենտրոններ եւ սարքավորումներ,

11)Տիեզերական գործունեության իրականացման համար օգտագործվող այլ կառուցվածքներ եւ տեխնիկա:

ԳԼՈՒԽ ~~Վ~~5. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հոդված 12. Տիեզերական գործունեության անվտանգության ապահովումը

1.Տիեզերական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված անվտանգության պահանջների պահպանմամբ:

2.Տիեզերական գործունեությունը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող օրենսդրությանը համապատասխան:

3. Տիեզերական տեխնիկայի եւ օբյեկտների շահագործողները տիեզերական գործունեության իրականացման ընթացքում ի հայտ եկած վտանգների մասին տեղեկատվությունը անհապաղ պետք է ներկայացնեն լիազոր, ինչպես նաեւ անվտանգության, պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների բնագավառների լիազոր մարմիններին:

4. Բնակչությանը եւ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի առաջացման դեպքում լիազոր մարմինը, ~~Շահագրգիռ մարմիններն~~շահագործողներն անհապաղ տեղեկացնում են այդ մասին պետական կառավարման համակարգի համապատասխան մարմիններին:

Հոդված 13. Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարների քննությունը

1.Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում արձանագրված պատահարները՝ ներառյալ վթարները եւ աղետները, ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 14. Որոնման եւ փրկարարական աշխատանքները, պատահարների հետեւանքների վերացումը

1.Հայաստանի Հանրապետության տարածքում տիեզերական գործունեության իրականացման ընթացքում որոնման եւ փրկարարական աշխատանքները, ինչպես նաեւ պատահարների հետեւանքների վերացումը կատարվում են ՀՀ օրենսդրությամբ նման լիազորություն ունեցող շահագրգիռ մարմինների~~,~~ լիազոր մարմնի կողմից:

2.Տիեզերական գործունեության իրականացման ընթացքում պատահարների հետեւանքների վերացման աշխատանքները ներառում են պատահարների արդյունքում տուժած արդյունաբերական եւ այլ օբյեկտների վերականգնումն ու վերակառուցումը, անհրաժեշտ բնապահպանական միջոցառումները, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կրած վնասի հատուցումը:

3.Օտարերկրյա պետության տարածքում տիեզերական գործունեության իրականացման ընթացքում որոնման եւ փրկարարական աշխատանքները, ինչպես նաեւ պատահարների հետեւանքների վերացումը կատարվում են փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Հոդված 15. Տիեզերական գործունեության ապահովագրությունը

1.~~Տիեզերական գործունեություն իրականացնող կազմակերպությունները~~Շահագործողները, որոնք օգտագործում են (շահագործում են) տիեզերական տեխնիկա կամ որոնց պատվերով ստեղծվում եւ օգտագործվում է (շահագործվում է) տիեզերական տեխնիկան պարտավոր են ապահովագրել ~~ծեռք բերել~~ տիեզերագնացների, տիեզերական ենթակառուցվածքների, տիեզերական օբյեկտների աշխատակիցների կյանքի, առողջությանը կամ այլ անձանց կյանքին, առողջությանը ու գույքին պատճառած վնասի համար պատասխանատվության ռիսկի~~ը ապահովագրությունը~~:

Հոդված 16. Տիզերեկան օբյեկտների եւ տիեզերական տեխնիկայի օտարումը

1.Տիեզերական օբյեկտների եւ/կամ տեխնիկայի օտարումը շահագործողի կողմից այլ շահագործողի ենթակա է լիազոր մարմնի կողմից համաձայնեցման:

ԳԼՈՒԽ ~~VI~~6. ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված ~~16~~17. Վնասների հատուցում

1.Շահագործողները փոխհատուցում են տիեզերական օբյեկտների կողմից երկրի վրա գտվող գույքին պատճառած ցանկացած վնաս:

2.Տիեզերական գործունեության արդյունքում հասցված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ ~~VII~~7. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված ~~17~~18. Պետական վերահսկողությունը տիեզերական գործունեության բնագավառում

1. Տիեզերական գործունեության բնագավառում պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ ~~VIII~~8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված ~~18~~19. Սույն օրենքի գործողության մեջ մտնելը

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգերը կառավարության հաստատմանն են ներկայացվում սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-354-12.11.2019-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Ամբողջ տեքստում	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը՝ «Տիեզերական գործունեության մասին» օրենքի նախագծի գլուխները համարակալել արաբական թվանշաններով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		Հոդվածներում	Նախագծի հոդվածներում համարակալումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		1-ին հոդվածի վերնագրում	«գործունեության» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «մասին» բառը՝ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնելով Նախագծի վերնագրին	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում	երկրի հեռակա դիտարկման արբանյակային **տվյալները** բնորոշվում են որպես տիեզերական տարածությունում գտնվող **տիեզերական օբյեկտ**: Նույն հոդվածով տիեզերական օբյեկտը բնորոշվում է որպես տիեզերական տարածությունում գտնվող կամ տիեզերական տարածություն	Ընդունվել է, 6-րդ կետի շարահյուսությունը խմբագրվել է:	Ընդունվել է

			արձակվող ցանկացած **սարքավորում և դրա բաղկացուցիչ մասեր**: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալները՝ որպես տիեզերական օբյեկտ բնորոշելը չի բխում տիեզերական օբյեկտի՝ նույն հոդվածով սահմանված հասկացությունից:		
		7-րդ հոդված	Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը վերանայել և համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասին՝ այն է ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանել միջակետով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		7-րդ հոդված	Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և նույն կետի ա) ենթակետը միավորել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «դ. ապահովում է շահագրգիռ մարմինների եւ կազմակերպությունների համագործակցությունը,», իսկ ե, զ և է ենթակետերը լրացնել «ապահովում է» բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		7-րդ հոդված	Մասերի և կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին: Նույն հոդվածում «համաձայնեցում» բառն անհրաժեշտ է փոխարինել «համաձայնություն» բառով, քանի որ համաձայնեցումը ենթադրում է գործընթաց, ուստի Նախագծով առաջարկվող ձևակերպումն առաջացնում է տրամաբանական անհամապատասխանություն:	Ընդունվել է, «համաձայնեցում» բառն փոխարինվել է «համաձայնություն» բառով	Ընդունվել է
		12-րդ հոդվածի 4-րդ մաս	Առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված	Ընդունվել է, «Շահագրգիռ մարմիններն»	Ընդունվել է

			«Շահագրգիռ մարմիններ» հասկացությունը: Կարծում ենք, որ պարզ չէ, թե որ սուբյեկտներն են ներառվելու այդ մարմինների շարքում:	հասկացությունը փոխարինվել է «շահագործողներն» հասկացությամբ:	
			12-րդ հոդվածով պարտականություն է դրվում տիեզերական օբյեկտների եւ տեխնիկայի շահագործողների վրա, որի համար պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն:	Ընդունվել է, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացվել է 150.14-րդ հոդվածով, նախատեսվել է պատասխանատվության միջոց:	Ընդունվել է
		14-րդ հոդված	14-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել վկայակոչվող շահագրգիռ մարմինների շրջանակը:	Ընդունվել է, 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է «ՀՀ օրենսդրությամբ նման լիազորություն ունեցող» բառերով:	Ընդունվել է
		15-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, առաջարկում ենք Նախագծի տարբեր հոդվածներով միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն բառերը: Օրինակ, Նախագծի 15-րդ հոդվածով սահմանված է «տիեզերական ենթակառուցվածքների օբյեկտներ» հասկացությունը, մինչդեռ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությունների շարքում առանձին են նախատեսված «տիեզերական ենթակառուցվածք» եւ «տիեզերական օբյեկտ» հասկացությունները:	Օրենքում «տիեզերական ենթակառուցվածքների օբյեկտներ» բառերը փոխարինվել է «տիեզերական ենթակառուցվածք» եւ «տիեզերական օբյեկտ» հասկացություններով:	Ընդունվել է
		15-րդ հոդված	Հիմք ընդունելով Հայաստանի	Ընդունվել է, «վնասի» բառից հետո լրացվել է	

			Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1021[1] -րդ հոդվածի 4-րդ մասը եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ Նախագծի 15-րդ հոդվածում «վնասի» բառից հետո լրացնել «համար պատասխանատվության» բառերը:	«համար պատասխանատվության» բառերով:	Ընդունվել է
		15-րդ հոդված	«տիեզերական գործունեություն իրականացնող կազմակերպություններ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «շահագործողներ» բառով:	Ընդունվել է, «տիեզերական գործունեություն իրականացնող կազմակերպություններ» բառեր փոխարինվել է «շահագործողներ» բառով:	Ընդունվել է
		8-րդ գլուխ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ նախագծի 8-րդ գլխի վերնագրում «ԵԶՐԱՓԱԿԻՉ» բառից հետո լրացնել «ՄԱՍ» բառը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Օրենքի 1-ին հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 150.12-րդ կետը վարչական պատասխանատվություն է նախատեսում պիտականշման համար, որի մասին նախագծերի փաթեթում ներառված որեւէ նախագծով նշված չէ:	Ընդունվել է, Օրենքի նախագծում «պիտականշման» բառը փոխարինել «պատկանելիությունը հաստատող նշումի» բառերով:	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն		«Տիեզերական գործունեության մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածով պարտականություն է դրվում տիեզերական օբյեկտների եւ տեխնիկայի շահագործողների վրա, որի համար պատասխանատվության միջոցներ նախատեսված չեն:	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացվել է 150.14-րդ հոդվածով, որով նախատեսվել է պատասխանատվության միջոց:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	**Ամբողջ տեքստում**	Լեզվառճական առումով խմբագրման կարիք է զգում:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Օրենքի 1-ին և 2-րդ հոդված	1-ին և 2-րդ հոդվածներում «150.13-րդ » թիվը փոխարինել «150.14-րդ» թվով, քանի որ նախագիծը լրացվել է նոր հոդվածով:	Ընդունվել է, «150.13-րդ » թիվը փոխարինվել է «150.14-րդ» թվով:	Ընդունվել է
«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Օրենքի 1-ին հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում ենք ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «կետում» բառը փոխարինել «մասում» բառով :	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					

1	ՀՀ կառավարություն	Օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներ	2-րդ և 3-րդ հոդվածներով համապատասխանաբար, նախատեսվում է 108-րդ և 112-րդ հոդվածների 1-ին մասերը լրացնել 19-րդ և 14-րդ կետերով: Մինչդեռ հարկ է նշել, որ հիշատակված հոդվածներում նշված կետերն արդեն իսկ առկա են:	Ընդունվել է, 19-րդ և 14-րդ կետերի համարակալումը փոխարինվել են 20-րդ և 15-րդ կետերով:	Ընդունվել է